

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔ

08.08.2014

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Նոր Գեղի համայնք:

Համայնքի ղեկավար Ֆ. Թևոսյանի ուղեկցությամբ մարզպետը եղել է համայնքում Նոր կառուցվող եկեղեցու շինհրապարակում, զրուցել է ճարտարապետի և շինարարության պատասխանատուների հետ, որտեղ նրան ներկայացվել են հոգևոր կառույցի ճարտարապետական լուծումներն ու հիմնական առանձնահատկությունները:

Այնուհետև Նոր Գեղի համայնքի խնձորի այգիներում Կոտայքի մարզպետը հանդիպել է գյուղացիների հետ, նրանց հետ քննարկել գյուղատնտեսական աշխատանքների ներկա փուլում տեղի ունեցող գործընթացների մանրամասները: Գյուղացիական տնտեսությունների հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև պետական հոգածության հիմնական ուղղություններին: Քննարկվել են սպասվելիք բերքի ծավալներին և իրացման հնարավորությունների վերաբերող հարցեր ևս:

Կոտայքի մարզպետը Նոր Գեղի բնակիչներին խոստացել է աջակցել հակակարկտային կայանների տեղադրման հարցում:

Նոր Գեղիում Կոտայքի մարզպետին ներկայացվել է նաև համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատված հատվածը, որը բնակիչների գնահատմամբ կարևոր նշանակություն է ունեցել իրենց համայնքի համար:

Կոտայքի մարզպետն այցելել է Նոր Գեղի միջնակարգ դպրոց, մանկավարժների և այլ աշխատակիցների հետ միասին քննարկել հաստատության գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված ծրագրային մի շարք ուղղություններ:

Համայնքի կրթօջախում Կոտայքի մարզպետը ընդգծել է սովորողներին որակյալ և մրցունակ գիտելիքներ հաղորդելու կարևորությունը և հանձնարարել այդ ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

Կոտայքի մարզպետը եղել է Նոր Գեղի համայնքի մշակույթի կենտրոնում, ծանոթացել տեղում գործող խմբերի աշխատանքներին, զրուցել պատասխանատուների հետ, ովքեր մանրամասնել են համայնքի մշակութային առօրյայի աշխուժացմանը միտված նախաձեռնությունները:

Մարզպետը Ա. Հարությունյանը ծանոթացել է նաև համայնքի առողջության առաջնային պահպանման կենտրոնի աշխատանքներին: Կենտրոնի պատասխանատուներին հանձնարարվել է նախատեսել հաստատության զարգացման հեռանկարային հստակ ծրագրեր, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կդառնա առավել բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների որակն ու ընդլայնել կազմակերպության հնարավորությունները: